Թերեզա Ամրյան

Մեկուսացած լույսը

2020 թվականի մայիսի 3-ն է: Երկար ժամանակ տնից դուրս չեմ եկել, մեկուսացել եմ ընկերներից, հարևաններից, աշխարհից, մեկուսացել և թաքնվել եմ պսակաձև ժահրից . պսակաձև ժահրը շատերին է վախեցրել: Այս տարի գարունն էլ անձայն եկավ, արդեն գնում է . պսակաձև ժահրը դեռ աղմկում է և չի ուզում հեռանալ:

Ուսանողներիս հետ կապվում և դասավանդում եմ տնից՝ համացանցի միջոցով: Աշխարհում կատարվող դեպքերի վերաբերյալ նույնպես տեղեկանում եմ համացանցից . ամեն օր համացանցում այնքան բան եմ կարդում՝ առաջին հերթին համաճարակի մասին: Ոմանք մեղադրում են, ասում են, որ պսակաձև ժահրի պատճառով մոտեցել է աշխարհի վերջն ու Ահեղ դատասանի օրը: Ոմանք արդարացնում են պսակաձև ժահրը, ասում են, որ աշխարհի կառավարիչները պատրաստվում էին պատերազմել, ասում են՝ եթե պսակաձև ժահրը չգար, նոր աշխարհամարտ կսկսվեր:

Լուրերի ու կարծիքների խեղդող հորձանուտում փորձում եմ գոնե մի լավ լուր գտնել: Համացանցում հայտնված հոդվածներից մեկը պատմում է իմ ազգակցուհու մասին . հոդվածն ասում է, որ սինջարցի եզդի աղջիկն ազատագրվել է ահաբեկիչների գերությունից: Աղջկա անունը Ռոնիյա է: «Ռոնի» իմ մայրենի լեզվով «լույս» է նշանակում: Նայում եմ ազատագրված աղջկա լուսանկարին, աչքերս այրվում են, ասես շիկացրած շյուղեր մտցնեն բիբերիս մեջ, լուսանկարի միջից ինձ նայող Ռոնիյայի մոխրագույն հագուստի և մուգ կանաչ գլխաշորի գույները լողզվում են: Գլխաշորը թաքցրել է Ռոնիյայի

մազերը . տեսնես մազերն ի՞նչ գույն են:

2014 թ . օգոստոսի 3-ին Իրաքի և Լևանտի իսլամական պետության՝ ԴԱԻՇ-ի ահաբեկիչ զինյալները հարձակվեցին եզդիաբնակ Սինջարի վրա, կոտորեցին իմ ազգակիցներից շատերին, երիտասարդ եզդի աղջիկներին ու կանանց էլ տարան՝ առարկայի պես իրար նվիրելու կամ վաճառելու:

Ռոնիյան վերապրել է Սինջարի եզդիական ցեղասպանությունը, 10 տարեկանից եղել է ստրկության մեջ, 14 տարեկանում ստիպված է եղել ամուսնանալ ահաբեկչի հետ . . . Եվ հիմա, երբ աշխարհում պսակաձև ժահրի պատճառով բոլորը մեկուսացել են, Ռոնիյան վերջապես ազատագրվել է: Սինջարի եզդիական ցեղասպանությունից հետո Ռոնիյայի ընտանիքի անդամները գաղթական են դարձել, թողել են հարազատ Սինջարը և ապաստան են գտել հեռավոր Կանադայում: Ռոնիյայի ընտանիքի անդամները երևի հիմա սպասում են, որ համաճարակի պատճառով փակված սահմանները բացվեն, և իրենք նորից տեսնեն Ռոնիյային:

ԴԱԻՇ-ը կոտորել է և շարունակում է կոտորել իմ ազգակիցներին միայն այն բանի համար, որ նրանք եզդի են: Մեր կրոնում սրբերից մեկը՝ Տաուսի Մալակը, սիրամարգի տեսք ունի . մեր նախնիները պատմել են, որ արարիչը Տաուսի Մալակին երկիր է ուղարկել, պատմել են, որ Տաուսի Մալակը հեռավոր ժամանակներում կոտրել է աշխարհը պատած սառուցը և գարուն է նվիրել մարդկանց: Մեր հարևան մուսուլմանները գուցե ոչինչ չեն իմացել գունեղ գարուն նվիրող սիրամարգի մասին: Մեր հարևանները սիրամարգի պատկերը սատանայի խորհրդանիշ են համարել, իսկ եզդիներին անվանել են «սատայի երկրպագուներ»:

Դարեր շարունակ Իրաքի հյուսիսում՝ Լալիշում և Սինջարում եզդիներն ապրել են՝ հարևան մուսուլմաններից մեկուսացած: Տեսնես ի՞նչն է այդ ժամանակ նախնիներիս ստիպել մեկուսանալ . մի՞թե պսակաձև ժահրը:

Լալիշում եզդիները միավորվել են միջնադարյան Արևելքում հայտնի քարոզիչ Շեյխ Ադիի շուրջ . ազգակիցներս նրան ուսուցիչ են անվանել և հավատացել են, որ Շեյխ Ադին աստվածային գիտության լույսն է փոխանցել մեզ: Շեյխ Ադիի

գիտությանը հետևող «սատանայապաշտներին» կոտորելու ժամանակ հարևանների ձեռքը երբեք չի դողացել: Մի քանի անգամ հարևանները նույնիսկ փորձել են Շեյխ Ադիի շիրիմը պղծել . . . Շատ եզդիներ փախել են Լալիշից, մեկուսացել են Սինջարի լեռներում և շրջակայքում, շատերն էլ ապաստան են գտել հայոց լեռներում, հայոց դաշտերում:

Երբ փոքր էի, եզդիների մասին հարցեր էի տալիս պապիկիս մայրիկին . ես էլ պապիկիս նման նրան ընե էի անվանում, որ մեր լեզվով նշանակում է «մայրիկ», «նանի»: Ընեն այնքան բան գիտեր մեր նախնիների մասին:

– Եզդիները ստեղծվել են Պիրաֆատի փեշի մեջ պահպանված մերանից . Պիրաֆատը փրկել է այդ մերանը, – շշնջում էր ընեն՝ ձեռքերը դեպի երկինք պարզելով և վերև նայելով:

Ես մտածում էի՝ երևի Պիրաֆատը վերևում է ապրում . ես հասկանում էի, որ ընեն երախտապարտ է Պիրաֆատին՝ մերանը փրկելու համար: Ընեի խոսքերը լսելով՝ ամեն անգամ փորձում էի մտովի տեսնել Պիրաֆատին: ԱհաՊիրաֆատն էլ ընեի պես եզդիական գույնզգույն տարազ է հագել և ինչ-որ բան է թաքցրել դարսավոր շրջազգեստի փեշի մեջ: Հետո ես պատկերացնում էի, թե ինչպես են բոլոր եզդիները հավաքվում Պիրաֆատի շուրջ և նրան ասում . «Ընե՛, ընե՛, պատմի՛ր մեր նախնիների մասին»:

Ընեի ձայնը կտրում էր իմ մտքի թելը, ընդհատում էր իմ երևակայական թռիչքը: Ընեն պատմում էր, որ 1915 թվականին Օսմանյան կայսրության կազմակերպած ցեղասպանության պատճառով իր հայրական ընտանիքը փախել և պատսպարվել է Արարատյան դաշտում . այդ ցեղասպանության ժամանակ ընեն երևի Ռոնիյայից էլ տարիքով փոքր է եղել: Հիշում եմ՝ ընեն Օսմանյան կայսրությունն անվանում էր Ռոմ . ընեի սերնդակից բոլոր եզդիները Օսմանյան կայսրությունը Ռոմ էին անվանում, իսկ իրենց ազգակիցներին ու հարևան հայերին կոտորած զինյալների խմբերին կոչում էին Ռոմա ռաշ, որ թարգմաբար «սև Ռոմ» է նշանակում . . .

– Հարևան մուսուլմանները մեզ սատանայապաշտ էին անվանում, – ասում էր ընեն, – նրանք 72 անգամ կոտորել են մեզ:

– Ընե՛, նրանք ինչու՞ էին մեզ կոտորում, – հարցնում էի ես:

– Նրանք ուզում էին ստիպել մեզ մոռանալ, որ մենք եզդի ենք, – ասում էր ընեն:

Երևի ամեն անգամ ցեղասպանության ենթարկվելիս եզդիները մտածել են, որ մոտեցել է աշխարհի վերջն ու Ահեղ դատաստանի օրը: Ամեն անգամ ցեղասպանության ժամանակ մեկուսացած ազգակիցներս զգացել են, թե ինչ բան է միայնությունն ու լքվածությունը . . . Երբ անգամ սրբերը օգնության չեն հասնում:

Ռոմա ռաշի մասին խոսելիս ընեն արտասվում էր, իր սիրուն, սպիտակ թաշկինակով սրբում էր աչքերը:

Ընեի թաշկինակի վրա ասեղնագործած սիրամարգ կար:

– Սա իմ հայ ընկերուհի Սոնիկի նվերն է, – ասում էր ընեն՝ հիացած շոյելով սիրամարգի պոչը:

– Ընե՛, քո ընկերուհի Սոնիկը լա՞վ էր նկարում,– հարցնում էի ես:

– Իմ Սոնիկն այնքա՛ն լավ էր նկարում, այնքա՛ն սիրուն հագուստներ էր կարում: Սոնիկը աստվածուհու նման ասեղնագործել գիտեր, – ասում էր ընեն:

Ընեի խոսքերը լսելով՝ սկսում էի պատկերացնել, թե ինչպես են աստվածներն ու աստվածուհիները նստում երկնքում և սիրամարգի պատկերներ ասեղնագործում:

Համացանցում նորից աչքովս ընկնող հոդվածները կտրում են մտքիս թելը, ընդհատում են իմ երևակայական թռիչքը: Նորից հիշում եմ համավարակը, հիշում եմ Լալիշում ու Սինջարում մեկուսացած իմ ազգակից եզդիներին, հիշում եմ՝ ինչպես ԴԱԻՇ-ը թիրախավորեց Սինջարի եզդիներին . . . Իսկ հիմա պսակաձև ժահրը բոլոր մարդկանց է թիրախավորել: Պսակաձև ժահրը կոտորում է բոլոր ժողովուրդների ներկայացացուցիչներին, տարբերություն չի դնում քրիստոնյաների, մուսուլմանների, եզդիների և մյուսների միջև: Տեսնես ո՞ր մի բժիշկը կկարողանա այնպես բուժել, որ բոլոր ժողովուրդները դուրս գան

մեկուսացումից: Տեսնես մեկուսացումից դուրս գալուց հետո մարդիկ կհիշե՞ն, որ իրենք արարչի գլուխգործոցն են՝ աստվածների և աստվածուհիների նման օժտված արարելու, ասեղնագործելու հանճարով:

Եթե հիմա ընեն ողջ լիներ, վերև կնայեր ու կաղոթեր . կաղոթեր բոլորի՝ տկարների, զինվորների, օտարության մեջ գտնվող մարդկանց, բանտարկյալների համար, երևի մեկուսացածների համար էլ աղոթեր, արարչից խնդրեր, որ մարդկությունը հաղթանակ տանի պսակաձև ժահրի նկատմամբ, դուրս գա մեկուսացումից, փակ ճանապարհները բացվեն և Ռոնիյան հանդիպի իր ընտանիքին:

Նորից Ռոնիյայի լուսանկարին եմ նայում . արդեն աղի արցունքները չեն այրում աչքերիս բիբերը, Ռոնիյայի գլխաշորի և հագուստի գույները չեն լղոզվում . . . Ռոնիյան ոչինչ չի մոռացել, Ռոնիյան շատ լավ է հիշում, որ ինքը եզդի է: Սիրտս ասում է, որ արարիչը լսել է իմ ընեի, բոլորի ընեների աղոթքները: Սիրտս ասում է, որ քիչ մնաց, ասում է, որ ճանապարհները կբացվեն, ինքնաթիռները նորից բոլորի ընտանիքների անդամներին կօգնեն հանդիպել, նորից կթռչեն՝ երկնի կապույտին թողնելով փետրաձև նախշեր: